



# Միքայել Նալբանդյան

## Իտալացի աղջկա երգը

«Մեր հայրենիք, թշվառ, անտեր,  
Մեր թշնամուց ոտնակոխ,  
Յուր որդիքը արդ գանչում է  
Հանել յուր վրեժ, քեն ու ոխ»:

«Մեր հայրենիք շղթաներով  
Այսբան տարի կապկապած,  
Յուր քաջ որդոց սուրբ արյունով  
Պիտի լինի ազատված»:

«Ահա՛, եղբայր, քեզ մի դրոշ,  
Որ իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղա,  
Արտասուքով լվացի»:

«Նայի՛ր նորան, երեք գունով,  
Նվիրական մեր նշան,  
Թո՛ղ փողփողի թշնամու դեմ,  
Թո՛ղ կործանվի Ավստրիան»:

«Ինչքան կին մարդ, մի թույլ էակ,  
Պատերազմի գործերում  
Կարե օգնել յուր եղբորը,

Չանց չարեցի քո սիրուն»:

«Ահա՛ իմ գործ, ահա՛ դրոշ,  
Շուտ ձի հեծի՛ր քաջի պես,  
Գնա՛ փրկել մեր հայրենիք,  
Պատերազմի վառ հանդես»:

«Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ մեռնե.  
Բայց երանի՛, որ յուր ազգին  
Ազատությամբ կը գոհվի»:

«Գնա՛, եղբայր, աստված քեզ հետ,  
Ազգի սերը քաջալեր,  
Գնա՛, թեև չեմ կարող գալ,  
Բայց իմ հոգին քեզ ընկեր»:

«Գնա՛ մեռիր դու քաջի պես,  
Թող չտեսնե թշնամին  
Քո թիկունքը, թող նա չասե  
Թե վատ է իտալացին»:

Ասաց տվեց օրհորդը  
Յուր եղբորը մի դրոշ,  
Մետաքսից էր, ազնիվ գործած,  
Ուր երեք գույն կան որոշ:

Եղբայրն առավ և ողջունեց  
Յուր սիրական քնքուշ քույր,  
Առավ գենքը, սուր, հրացան,  
Հեծավ յուր ձին սևաթույր:

- Քույրի՛կ, - գանչեց քաջ պատանին, -

Մնա՛ս բարյավ, սիրական,  
Այս դրոշակին պիտի նայի  
Ամբողջ բանակն իտալյան:

Նա սո՛ւրբ է ինձ, երբ մկրտված  
Արտասուքով ու կնքած,  
Դու հանձնեցիր ինձ հիշատակ,  
Հայրենիքի նվիրված:

Թե մեռանիմ, դու մի՛ սգար,  
Իմացի՛ր որ տարեցի  
Դեպի մահու արքայություն  
Իմ հետ քանի թշնամի:

Ասաց, վագեց դեպի հանդես  
Ավստրիացոց հանդիման,  
Յուր արյունով գնել հավերժ  
Ազատություն իտալիան:

Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է  
Տեսանելով այսպես սեր  
Դեպի թշվառ մի հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր:

Սորա կեսը, կեսի կեսը,  
Գեթ երևեր մեր ազգում.  
Բայց մեր կանայք ո՛ր Եղիշե,  
Ո՛ր մեր տիկնայք փափկասուն:

Ո՛հ արտասուք ինձ խեղդում են,  
Այլ չեն կարող բան խոսել.  
Չէ՛ թշվառ չէ Իտալիան,  
Եթե կանայք այսպես են: